

## Մ Ա Մ ՈՒ Լ

Պարոն Ա. Չորանեան, թէև զուրկ նիւթական միջոցներից, բայց գովելի եռանդով և տոկունութեամբ շարունակում է իւր «Անահիտ» ամսաթերթի հրատարակութիւնը: Հաճոյքով ես կտրուում հմուտ գրագէտի հայ անցեալ և ներկայ բանաստեղծութեան ուսումնասիրութեան նուիրուած յօդուածները: Ոչ մէկը, կարելի է ասել, մեր քննադատներից չունի այն հոտառութիւնն ու հասկացողութիւնը գրական գեղեցկութեան մասին, ինչպէս պ. Չորանեան: Նորա ուսումնասիրութիւնները նահապետ Քուչակի և Մկրտիչ Պէշիքթաշլեանի մասին գեղեցիկ ապացոյց են նորա գեղասիրական ճաշակի և հասկացողութեան: Բայց գնահատելի է նա նոյնպէս իբրև լուրջ հրատարակախօս և հայ կեանքի քննադատ: 1907 թ. հոկտ.—նոյեմբ.—դեկտ. միացեալ համարների մէջ պ. Չորանեան մի յօդուած ունի «Հայրիկ»-ի մահուան առթիւ՝ վերնագրով: Յարգելի գրագէտը հանգուցեալ կաթողիկոսի անհատականութիւնն ու գործունէութիւնը բնորոշելուց յետոյ՝ իւր կարծիքն է յայտնում նաև էջմիածնի նշանակութեան մասին:

Էջմիածինը մեր հին մեծութեանց միակ կենդանի մնացորդն է: Մեր կրօնական գերագոյն սրբավայրն է ան, ու նաև մեր Արքունիքը: Ամէն Հայ, հաւատացեալ կամ անհաւատ, կը յարգէ զայն, և պէտք է յարգէ, որովհետև ազգային ինքնուրոյնութեան կանգուն մնացած կոթողն է ան, ու պիտի շարունակէ ըլլալ՝ ցորքան մեր ազգը քաղաքական ինքնավարութենէ զուրկ մնայ: ... Եթէ կաթողիկ կամ բողոքական Հայուն համար՝ էջմիածնայ կաթողիկոսը կրօնական բարձրագոյն հեղինակութիւնը չէ, «ազգին պետն» է, ներկայացուցիչը Գրիգոր Լուսաւորչին ու Տրդատին, որոնք հայրն են և հիմնադիրը բովանդակ քրիստոնեայ Հայութեան: Եւ եթէ ճիշդ է որ Պօլսթենիան մասամբ կը

սահմանափակէ մեր այդ հոգեկան վեհապետին անկասու-  
թիւնը, այդ սահմանափակումը չ'արդիւլեր սակայն մեր  
կաթողիկոսը վեհապետ մը մ'նալէ, վեհապետ մը՝ որ ինչ ինչ  
վարչական հարցերու մէջ ռուսական պետութեան գերիշ-  
խանութեանը կ'ենթարկուի, ինչպէս մեր Բագրատունիները՝  
Արաբաց գերիշխանութեան կ'ենթարկուէին, բայց որ՝  
ինքնին՝ կը նկատուի ու կը յարգուի Ռուս իշխանութիւն-  
ներէն ու ժողովուրդէն՝ ինչպէս և ամբողջ մարդկութենէն՝  
կրբև Հայ ազգութեան անձնաւորումն ու խորհրդանշանը:  
Էջմիածինը այն հիմնարկութիւնն է որով մենք, մեր արդի  
անկմանը մէջ, մեզ կրնանք պահ մը հաւատար զգալ ամե-  
նահոօր ազգերուն, և բարձր իսկ՝ անոնց շատերէն. անդ-  
լիական կամ ռուս եկեղեցին պատկառանքի զգացում մը  
ուսին այդ մեծ Տունին համար, որ իրենցմէ շատ առաջ  
ընդգրկեց նոր ժամանակներու կրօնքը: Այն սիրուն ու  
պատկառելի աւանդութիւնները որ կը ծածանին այդ Տան  
վերև, — գեղանի և կորովի Արեմտահին, որ եկաւ հոն իր  
արիւնով ու ողբել նոր Գաղափարին ու ռճացումը, մեծ  
ձգնաւորը որ տասներկու տարի ողջ մ'նաց օձաբնակ քա-  
րայրին աղջամուղջներուն մէջ՝ որովհետև Հաւատքին ու ժը  
զինքը անպարտելի կը կացուցանէր, երկնաւոր Շողը որ  
իջաւ հոն՝ իր թևերուն վրայ կրելով Միածինը, որ եկաւ  
իր ձեռքովն իսկ գնել հիմունքը Հայոց հոգեշէնքին, ու  
դարաւոր պայքարը զոր այդ Տունը՝ ինչպէս խորակ մը  
մենաւոր՝ կատարած ծովու մը դէմ ցցուած՝ մղեց նոր Աշ-  
խարհին թշնամիներուն դէմ, ու մտաւոր բաղմամեայ  
ճիգը զոր այդ Տան մէջ ազգին ու եկեղեցւոյն նուիրուած  
մտքեր թափած են՝ մեր հայրենի լեզուն, գրականութիւնը,  
արուեստը ծաղկեցնելու, — այս բոլորը զայն կը լուսապսա-  
կեն ճաճանչներովը վեհ բանաստեղծութեան մը, որուն  
անտարբեր չի կրնար մ'նալ ո և է մարդ, որ կը սիրէ մեծ  
ու գեղեցիկ բաները: Ան տեսակ մը բարոյական Արարատ  
է, միւսին դէմը կանգուն, անոր պէս ալևոր, վեհափառ  
ու երկնամբարձ:

Ահա մի գրագէտ, որ հոգւով հայ է, ծանօթ նախ-  
նեաց պատմութեան և հոգևոր քաղաքակրթութեան, որի  
օրտի մէջ աղգային զգացում կայ, իսկ գլխի մէջ գիտակ-  
ցութիւն դէպի հայրենին:

Բայց համեմատեցէք դորա հետ Ալէքսանդրապոլում հրատարակուող դաշնակցական «Ժայռ» թերթուկը, և տեսէք, թէ ինչպիսի գարշահոտութիւն է բուրում այնտեղից: Իբրև նմուշ կ'ընենք միայն № 19ում «Մամուլ» վերնագրի տակ հաւաքած աղբակոյտը, «Արարատ»-ի յունարի տետրակի մէջ մեր աշխատակից \* \* «Տաճկահայք» վերնագրով յօդուածում նկարագրել էր մեր եղբայրների ողբալի վիճակը աղգային և վարչական կողմից, նորա կարծիքով յեղափոխական շարժումը կորստաբեր հետեանքներ է ունեցել Տաճկահայոց համար, մի կարծիք, որ երկար տարիների և դառն փորձերի արդիւնք է: «Ժայռ»ի խմբագիրը կամ յօդուածագիրը կարող էր հակառակը պնդել, այս էր գրական էթիկայի պահանջը և ոչ ոք նորան մեղադրել չէր կարող, եթէ համոզմամբ և վայելչութեան սահմանների մէջ պաշտպանէր նոյն իսկ մի յիմար կարծիք: Բայց «շամքը բուրաստան չի լինիլ»: Դորա փոխարէն սկսել է այնպիսի լեզու բանեցնել և լուտանքներ թափել, որ յատուկ է փողոցային սրիկային, բայց ոչ մամուլի ներկայացուցչին:

Առաջին տողերից իսկ (Արարատի յօդուածի մասին է խօսքը) դուք հնարաւորութիւն ունիք ապացուցանելու, որ յօդուածագիրը մի գրական բարբարոս է, մտաւոր անառակ և ցինիկ բարոյականով: \* \* \* Այսպէս ուրեմն խուլիզան յօդուածագրի համար յեղափոխականներն են պատճառը հայութեան կործանման \* \* \* այդ խղճուկ մարդուկի ցինիզմը սակայն միայն այդ չէ: Օրմանեանների «ուշաղը» դեռ շատ է յառաջ գնում: Խօսելով Տաճկահայ վարչական վիճակի մասին չի քաշուում փառաբանել իր տասնը մէկ տարուայ պաշտօնավարութեան մէջ ճահիճից ճահիճ թաւալող վերջին անամօթ պատրիարքի դործունէութիւնը: Եւ \* \* \* այն, որ լպիրշ անառակութիւններից ձանձրացած իր կուրծքը զարդարել աշխատեց միայն գազանօրէն ոտնատակ արւած հայի սրբութիւնների գնով օճած շքանշաններով \* \* \*

Մենք չգիտենք թէ ինչպէս է վարձատրած Օրմանեանն այս գրչի հոյակապ շանտաժը, բայց մի բան հաստատ գիտենք, որ էջմիածնի «մաքրակենցաղ» միաբանու-

Թեան իբրև ղեկավար՝ անհրաժեշտ է փաշաների հարէմ-  
ներում գաստիարակաճ Օրմանեանը:

Զրիակերները, որքազան անառակները որջն (իմա՛ էջմիա-  
ժին) այն ժամանակ ցոյց կը տայ այնպիսի պատկեր, ինչ-  
պիսին ոչ մի տեղ չի կարելի տեսնել: Այն ժամանակ միա-  
բանները հեշտասէր մահճակալներից պիտի արձակեն  
աւելի թունդ վճիռներ այնպիսիների հասցէին, որոնք փո-  
խանակ կղերական տղմի մէջ խողի բաւականութեամբ  
տապալակէլու, գնում են իրենց կարմիր արիւնը զոճ բե-  
րելու ազատութեան սեղանին:

Կարդալով այս յօդուածը ահամայ մտածում ես,  
արդե՞օր յօդուածագիրը խելագար չէ՞ կամ հոգեկան հի-  
ւանդ: Մեր ընթերցողներին յանձնարարում ենք նորից  
կարդալ «Արարատ»-ի յօդուածը և ապա «Ժայռ»-ի նկատու-  
ղութիւնները, որպէս զի անձամբ համոզուին թէ այդ  
թերթի ղեկավարները մամուլը հոտած ճահիճ են դար-  
ձրել և իրենք բնակուել այնտեղ:

